

Ա. Ա. ՀԱՐՈՆԵԱՆ



Կը հեռանայ լեռներէն, ուսկից հայուն դիակները և թշնամիին գնդակները կը թափին: Օր մը կ'ըսէի իրեն. Հայաստանցիին վրայ շատ չափազանց ողբական են պատկերներդ, անգթութիւնը սաստիկ գոյներով կը նկարագրես: Իզդիբցի վիպասանը պատասխանեց. «Թշուառներու մէջէն կու գամ, իրական ցաւի աշխարհէն: Գրեթէ տասը տարի է որ մեր կեանքի աչքերէն վազած արցունքը մեզի ցոյց տայ: Սիրտդ կտոր կտոր կ'ըլլայ, կը գոցես աշուրներդ որ չի տեսնա իր պատկերները. իրական ցաւին ու տառապանքին հետ երբ խառնուի նկարիչին բռնկած զգացմունքը, պատկերին ողբերգութիւնը սոսկալի է. մանաւանդ երբ այդ պատկերը թու օրօրանիդ խորշերուն մէջ կատարուած ոճիրներու սոսկումը կը մարմնացնէ: Հարազատ ցաւը մեր սրտին վէրքէն կը զգանք. Պ. Ահարոնեան իր նախորդ վիպակներով և պատկերներով այդ ցաւը նկարեց: Հիմայ տիեզերական հոգեբանութիւնը կ'ուսուցնասիրէ: Իր «Կեանքի վէպը» ընդհանուր ժողովային կեանքի խոշտանգիչ և քաղդին սգաւոր փորրկկ ուրուանկարը կը համարիմ:

Հայաստանէն՝ համաշխարհային ցաւէն անցեր է: Կեանքի ամբափակ երկաթէ գոները կրցն'ը բանալ. Մէթէրլինքի տեսութեամբ՝ տիեզերք պողովատէ գնդակէն աւելի ուժով գոց է մեր առջեւ:

Պ. Ահարոնեանի հրաշունչ երեմիականները՝ չենք կրնար ընդունիլ կեանքի խորաթափանց հոգեբանութիւն. այլ ընդհանուր տառապանքին անըջանքներ:

*

Փարիզ արքշիքներու շուայտ քաղաքը՝ դժբաղդութեան լեռ մ'ունի իր սրտին վրայ. վիպասանը անոր արգանդէն դուրս կը կորզէ մուրացկան մերժումներու տա-

ռապանքի զաւակները, դաժան ճակատագիրը անոնց զլացած է գթութիւն և հաց: Այդ լեռան վրայ վաւառտ հակայ յիմասքը — ամբողջ՝ կը զուարճանայ. վայելք, հեշտանք ամբողջի մարմնոյն ջղերն և արիւնն են. անգթութիւնը խենչէ մուրացք մը հրդեհած է այդ տոհմոտ խաժամութիւն մէջ:

Վիպագիրը քաղդէն հալածուածներու հեծեծանքը կը լսեցնէ: Կը վարանիս. ինչ պէտք է ընել. աղքատներու կարաւանը մտեղէ անցուր. առհասարակ ամենուն վրայ ինքը կը գթայ. բայց ամէն աղքատ գթութեան կարօտ է. վիպասանին խորհրդածել կու տամ իր այս խօսքը. «Անգիտակից ու ապուշ հոգիները հիւանդ աշխարհի թիկունքին ամենածանր բեռն են»: Այդ ապուշներու մեծ մասը այդ կարաւանին մէջ փնտռէ. ծուլութիւնը շատերը մուրացկան է ըրած: Գթալ, ողորմիլ լաւ է շատ լաւ. բայց միայն արժանաւոր աղքատները պէտք են վայելել այդ առաքինութիւնները:

*

Կայ տիեզերքի մէջ զրկուածներու հեծեծանքը, կան անկեղծ հեծեծողներ, և միայն թշուառութեան ծնունդները չեն որ կը հայոյնն քաղդին անագորոյն երեսին. կան զիտակցութեան զաւակները, անոնք աւելի ըմբռնած են տիեզերական անպարագրելի պատրանքի հոգեբանական խժըրժութիւնը. անոնք աւելի խարազանուած են. անողորմ ճակատագիրը ճանկոտած է անոնց հոգին. ու ցաւը աւելի լեռնակուտակ, աւելի շանթահարող. զիտակցաբար հեծեծողներն են որ կ'ըմբռնեն թէ «ողջ տիեզերքը լի էր ցաւի անհուն հիշերով, որոնք ամէնքը միասին նզովում էրն և՛ սէր, և՛ ծնունդները, և՛ աշխարհը»: Խաբերայ աշխարհ, որ սիրոյ անուրջին մէջ կը թաղէ լալկան մարդկութիւնը:

Ամենէն կորովամիտ յոռետես վարպետը՝ Շոթէնհատը՝ կեանքի մորկին առջև անտարբեր կը մնայ. կարծես քնական է թշուառութիւնը, հոգեկան տանջանքը և

ճակատագրական հալածանքը, վիպասան Ահարոնեան՝ գիտէ անշուշտ այդ մեծ յուռետեսին վարդապետութիւնը. «Կեանքը խորապէս թաղուած է դժբաղդութեան մէջ, ուսկից չի կրնար ազատիլ ան: Աշուրնիս կը բանանք արցունքով, մեր կեանքի ընթացքը ողբերգութիւն է, և վախճանը աւելի ցաւալի...»: Պ. Ահարոնեանին եթէ համոզիչ են յոռետեսին այդ խօսքերը, փոթորկալից նզովը և անէծքի գոհը կը թափէ ուրեմն ճակատագրի գլխին:

*

Ձին նկարագրեցին մարգարէական, հովուերգական շնչով. ան դիւցազներգու ալ ունեցաւ, հին նկարագրութիւնը գեղարուեստական հմայքով անմահ. նոր նկարագրութիւնը տարբեր է. կայ իրապաշտ գրականութիւն և կայ հոգեպաշտ գրականութիւն. սատկած ձին Պ. Չօպանեանէն կը նկարագրուի լուսանկարի ճշգրտութեամբ, բայց աւելի գեղապաշտ բլլալու համար, լաւագոյն էր Գոնգորէնբուլ գոյները գործածել. կենդանի ձին կը նկարագրէ Ահարոնեան, այդ տեղ հոգեբանութիւն կայ, այլարանական պաշտպանութիւն աշխատաւոր դասակարգի զօրեղ դատին: Խուրկումի խոշոր գիրքը կը բացուի. ու կը մոռնաս. ամէն դասակարգի մէջ անհասարակութեան անիրաւութիւնը զգալի է. տարբեր հանգամանքներու մէջ կ'ապրի հարուստին ձին, և տարբեր արջատին ձին. և անասուններ կան որ նախանձի են, աղքատ մարդը կը նախանձի անոնց վրայ. «Ես գիտեմ, տեսել եմ ջներ հարուստ խանութներէ գրկերին, որոնք ինձանից աւելի արժեն»: Մարդն է ըսողը: Խղճալի չէ: Բայց մարդը ինքնին ինչո՞ւ խղճալի մնայ... Ճակատագրական դժբախտութեանց վրայ լալ չարժեք. այլ պէտք է դիմադրել կործանիչ հարուածներուն: Ուրիշին երջանկութիւնը մեր ցաւերուն վրայ թունաւոր ազդեցութիւն ինչո՞ւ ունենայ. կեանքէն քիչ դաս առած ենք, եթէ չենք գիտեր դիմադրուել:

Պայքար, յաւիտենական կռիւ և մենա-

մարտ մըն է կեանքի և ճակատագրի անհաշտութիւնը: Կեանքը՝ զմեզ ճնշող հրէշային բեռն է. ամենուն անխտիր սեփականութիւն է այդ բեռը. այդ լուծին տակ խորտակուողը՝ մարդկային ստոր դասակարգին կը պատկանի: Պ. Ահարոնեան ունի սա գեղեցիկ պարզ նախադասութիւնը. «Ով ուսերի վրայ գլուխ ունի, մէջքին էլ բեռ ունի»: Բայց ինչո՞ւ վիպագիրը շատ անգամ թոյլ կը գտնուի, ու այդ բեռը կորստով թեթեւեղեւու տեղ, հոգեկան լակնանութեամբ կը ծանրացնէ: Պ. Ահարոնեան լալ կը սիրէ, լացընել ալ կը սիրէ: Եւ աւելի լացնող է:

*

Յոյսը երբ անորոշութեան մէջ կը տառապի, պէտք է որ լայ. յուսալ ու լալ տարօրինակ է: Խոր հոգեբանութեան մէջ կեանքի կոշտ երակները եթէ ուզենք փափկացնել, ճակատագրական կակիծները շուտով կը բանան մեր գեղեցիկ գլուխը: Երագող մըն է ան՝ որ ընկերէն կը յուսայ յաւիտենական համակրանք հաւատարմութիւն. կատարեալ յոռետեսն եմ. դատեցէք ինչպէս որ գիտէք: Կեանքէն լաւ դաս առէք և յետոյ դատեցէք, կաթիլ մը արտասուք պէտք է մուրալ. մեր գեղեցմանը դրախտ կը դառնայ, այդ արցունքին հպումով: Պ. Ահարոնեան շատ փափկացեր է, տեսէք ինչ բանի մէջ կը նկատէ երջանկութիւնը. «Գոնէ մի կաթիլ արցունք դիակի վրայ, այդ էլ երջանկութիւն է, թէ մարդ իմանայ մահից առաջ»: Բնագրական կաթիլներ կարելի է թափին:

Մայրը, ծնողը միայն կարող է անկեղծ արցունք թափել: Արցունքով երջանկանալ՝ տարօրինակ միաթափութիւն է ըստ իս: Ու կը զարմանանք թէ կեանքի թատերաբեմին վրայ կը գտնուի եղբւր անձնանուէր ընկեր: Իրական աշխարհէն կարելի է յուսալ: Պ. Ահարոնեանի լացող յոյսերին աչքի կը զարնէ «Չորեքնուկը». սրտաշարժ դէպք մը պատկերի նիւթ առնուած է. պատերազմի դէմ կը դիմեն երկու ընկեր զինուորներ. մէկը նշանուած է. հրա-

ցաններու գնդակները կատաղի օծերու պէս շշխուով կը տարափեն. կտրիճները առաջ կ'երթան, վտանգը իրենց կը մօտենայ. և նշանուածին ետեւէն եկող ընկերը կ'ըսէ. «Թող ես առաջից քայլեմ, դու յետեւից. տես գնդակները բոլորն էլ առաջից են գալիս և վտանգը մեծանում է: Ես աւելի զոհ կը մեռնեմ, եթէ դու զոհէ կենդանի հասնես նշանածիդ: Իմ կեանքը հայրենիքիցս բացի ոչ ոքի հարկաւոր չէ, իսկ քեզ սպասող կայ: Երկու ընկերները համբուրեցին և տեղերը փոխեցին. նշանուածը սկսեց քայլել յետեւից, իսկ միւսը առաջից»: Կատարեալ անձնանուիրութիւն: Եղբայրական, ընկերի սէրը սրբացած գերբնական վեհութիւն մ'առած է: Եւ վիպասանը ցոյց կու տայ անոր հաւատարմութիւնը: Առջեւէն քալող ընկերը՝ յանկարծ կը տեսնէ չորեքնուկ մը, կը ծօր և քաղելու ժամանակ, գնդակ մը անոր զլխին վրայէն սուրբալով՝ կ'անցնի կը հարուածէ իր նշանած ընկերը. սա արիւնհաթաթա գետին կ'իյնայ. և ուզելով վարձատրել իր անձնանուէր ընկերը, իր նշանածը անոր կը յանձնէ: Որանչեւի է գիտքը, չորեքնուկի չափ հաղաղակու, կամ անգիւտ... ու անգիւտ՝ եթէ պարզօրէն դէպքերէ խաբուինք ու փնտռելու ելլանք՝ մարդկային դասակարգի խոպան դաշտին մէջ:

*

Որփէտսի քնարով սանդարամետի բաւիղներու մէջ մի՛ յափշտակուիր. ա՛ռ Տանդէի Դոփքը, զնա՛ ծովափ, կարգա՛ ու խոկա՛. հողին տակը, խոռվիք ու կրակի զարուհիները այնքան ապշեցուցիչ հաւանութեամբ մը պիտի չունենան, որքան Պ. Ահարոնեանի «Խով» ին պատմութիւնը: Հոն կը կարդանք մեր կեանքի չարչարուած հոգեբանութեան էջերը, մտքերը ալիկոծուած են, ամէն կողմ ծովացած է կրակը, ամէն կողմ աւերակ, դիակ, գազանութիւն, անգթութիւն. ազգերը արիւն կը խմեն, տիեզերք արիւնով գինովցեր է: Դիւահարական երա՛գ. դիւահարած է

նաև ամբողջ աշխարհն, հրեշտակի սուրով խառնուած է սատանի թուրը՝ Ալամի արիւնին հետ, և այդ ներկով վիպասանը կը նկարէ կեանքի ծով դոփքը: Զարհուրանքի պատկեր է այն: Պ. Ահարոնեան պահ մը կը մոռնայ լալկանութիւնը, շանթահարող է. իր մտքերը այլ ևս հրեղէն ոռոմբեր են, անով կը խորտակէ անիրաւութեան ազնուապետական զղեակներու պարիսպները. հաւաւոր է զրկուած աշխատաւոր դասակարգի երգը. «Խուժ նկուղներից, գետնափորերից, աւերակներից, պատերի տակից բարձրանում է քրտնաթոր ու սև ամբողբ և նրա երգն է հնչելու, քաղցի երգը, անողորմ ու ահաւոր՝ ինչպէս արդարադատութիւնը: Անիրաւութեան կարծր ժայռերին պրկուած աշխատանքն է, որ ձգձգում ու ցնցում է իր շղթաները, տանջուած հոգիների խորքում քնած գայլոյթի գազանն է ետում ու փրփրում և ծովի պէս ծառանում ու նետուում է առաջ աւերիչ յորձանքներով»: Եւ այլ ևս կը կարծենք թէ Պ. Ահարոնեան երկաթէ հոգի մը հագած է, գիտէ բռնել իր արցունքը. վայրկենական է այդ ըմբոստութիւնը: Կեանքը, ճակատագիրը փոփոխութիւն պիտի չի կրէ, «վերջին պայքարը հետու է, խաւարը թանձր, գիշերը սև և արշալոյսը երազ է լոկ»: Թուսահատեր է. կոռուղներու դիակները փրոռած են և ինքը ճարահատ կը հրամայէ. «Լուռ, լուռ, և թող քնեն, ինչպէս քնել են հազար հազար սերունդներ...»: Բայց ո՛չ, գիտակից աշխատաւորը՝ ա՛լ լըռել չի գիտեր... Ամբողջ տիեզերքի ոչընչացումին սպասելու չենք՝ զրկանքներու դատի բարոյեցումին համար: Ժամանակը յուսահատ չէ. լացող յոյսերը հիմա կուլան, վաղը կը խնդան: Յաղթանակը դիմազրաւ տոկուն պայքարէն կը բղխի:

*

Պ. Ահարոնեան գեղասպաւն է. կը զգացնէ, վասն զի ինքը կը զգայ ցաւը, գեղը և սէրը. կը սիրէ կրկնել ու կրկնել, ախորժելի շատախօս մըն է, չեա ձանձ

րանար, կը շարունակեաւ ընթերցումդ. սիրահարուած ես իր էջերուն, ուր կը զըտնես ազնուական հոգի մը, սրտիդ հետ խօսող լեզու մը, միտքդ հմայող աւիւն մը: Եւ շատ անգամ կը համոզուիս, որ սովորական գրիչներէն վեր, արձակ բանաստեղծ մըն է: Եւ ամենէն լուրջ փիլիսոփայական և հոգեբանական հարցերու մէջ, յանկարծ կը տեսնես զինքը անզուսպ խանդէն ընկճուած՝ երևակայութեան անձնատուր, նկարչական էջեր կը ստեղծէ, այդ տեղ վականերն են, Շէքսպիրեան և Պայրեան. դիտեցէք սա պատկերին գեղեցկագիտական ձեւը և հոգեկանը.

«Ստանաները գնդակ են խաղում հանձարների գանգերով, զաւակները լափում են հայրենի աճիւնների մէջ քսած կանաչին, կոյսերը իրենց փարթած կրճերի վրայ կրում են գերեզմանի հողից ծլած վարդը և մահաւան հակայական ջղջիկը հողմահարում է մարդկութեան դալուկ ճակատը: Կատաղի անգղերը բզկտում են աշխատաւորի թրթռուն սիրտը և ագահօրէն խմում են նրա տաք արիւնը, ձիւրի սմբակները թաղում են բացւած կրճերի մէջ, և երկաթէ պայտերը փշրում են վիթաւորների գանգերը»:

Ահաւոր է այս պատկերը, քեզ կը յիշեցնէ Պայրենի ստանանները, վակաների վճուկները, Շէքսպիրի ուրուականները և Տանդէի վիշապաթեւ ջղջիկները: Եւ այդ Եսարեկիչ պատկերին մէջ զրկուածին, չարատանջ քանուրդներու խնդրը ևր պաշտպանութիւն Բանուրդներու հարցը չէ մոռցուած բնաւ. անոնք են կարծես կեանքի վէրքերը, արդարութիւնը պէտք է որ վերջապէս գթութեան բալասանով բուժէ այդ մեծ վէրքը, թէ ոչ կը սպառնայ այդ վէրքը, ամբողջ աշխարհի պատուհասը կը դառնայ. բանուրը ալ իր բերնին մէջ ըմբոստութեան երգ մ'ունի, քրանաթոր կրակին դիմաց կ'երգէ, խոնաւ նկույններուն մէջ մրտաւ խոշտանգուած կ'երգէ. գործատանց թունաւոր օդին մէջ հիւժած կ'երգէ, բերանը դժոխքի դուռն է դարձ-

ած, ուսկից վրէժինդրութեան կրակը կը պողթկայ.

«Մենք երգում ենք ու ծառանում. չէ մենք շատ ենք աշխատել ու միշտ ենք քաղցած. ճանապարհ, ճանապարհ նրանց, որոնք տքնել են՝ առանց վայելելու, աւրին — քրտինք են թափել ու միշտ դրժբաղդ են, որոնք վաստակել են ու լացել, քաղցից ապարանքներ են կերտել անապաստան միալու համար ճանապարհ, աշխատանքն է անցնում հզօր ու ստեղծագործող, որ այլ ևս քաղցած չէ ուզում միալ: — Ճանապարհ»:

Աշխատանքն է խօսողը, բանուրը ելր կ'աշխատի և գիտէ յարգը աշխատանքին, գիտէ յարգը տաժանակիր տուայտութեամբ ձեռք ձգած դրամին. ռամկապետական վահագուն մըն է ան, աշխատանքի ասպետը. ծոյլ, դատարի ազնուապետական՝ պէտք է խոնարհի անոր առջև, պէտք է ճամբայ տայ որ անցնի, իրմէ վեր բարձրանայ, իր վրայ իշխէ:

Աշխատանքը կեանք է, փառք է: Պ. Ահարոնեան կ'աստուածացնէ այդ հոգեկան կուռքը, որուն տաճարին մէջ թագակիր և բռնակիր հաւասար արժէք ունին:

b.



«ՎԱՆԵԿԱՆ» Ի ՍՏՈՒԳՐԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ

Հիւպըման այս բառը կը ստուգարանէ պարսկերէն դահլու (տան) բառէն. ըստ այսմ Վահեկանը՝ հին ժամանակ զործածուած միութեան տաններորդ մասն էր: Բայց ինչպէս մեկնել և տալի յաւելուածը՝ հայերէնի մէջ (Վահեկան)՝ Միւս կողմէն ծանօթ է (Հեքոյտոս Գ, 96) Թէ Դարեհ Ա. եղաւ զրաւի կանոնաւոր զործածութեան ընդհանրացնողը. «Le darigue d'or ou d'argent n'eut jamais plus de trois centièmes d'alliage» (Հին Հայոց Պատմութիւն, Դօք Ըրէն և Ա. Քաշ, Ժոնէժ, էջ 86): Կարելի չէ՝ ենթադրել՝ Թէ մեր Վահեկանն քառը Վարեհկանն էր համապատասխան ըստայ:

8.